ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28.03.2020 Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի 24 անդամներից 19-ը

ՕՐԱԿԱՐԳ

1. Արտակարգ դրության պայմաններում Zoom համակարգով դասեր վերսկսելու հարցի վերաբերյալ (զեկ.՝ Կ. Պողոսյան):
2. 2019-20 ուստարվա II կիսամյակի I ընթացիկ քննաշրջանի և ավարտական կուրսերի քննաշրջանի կազմակերպման հարցը (զեկ.՝ Կ. Պողոսյան):
3. Ավարտական աշխատանքների I նախապաշտպանության հարցը (զեկ.՝ Կ. Պողոսյան):
4. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի հաստատման հարցը (զեկ.՝ Կ. Պողոսյան):
5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Նա նշեց, որ արտակարգ իրավիճակի պայմաններում, դասընթացների յուրահատկություններից ելնելով, դասախոսները կիրառում են հեռավար ուսուցման տարբեր միջոցներ: Առցանց ուսուցման գործընթացը հնարավորինս վերահսկվում է ուսումնամեթոդական վարչության, ֆակուլտետի դեկանի, ամբիոնների վարիչների, կրթական ծրագրերի պատասխանատուների համագործակցությամբ: Անմիջական կապ է ապահովվում կուրսերի ավագների հետ՝ ուսանողների կարծիքներն ու առաջարկները լսելու, թերացումները շտկելու, ուսումնական գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով: Նա նշեց, որ ուսումնական գործընթացի շարունակականությունն ապահովելու նպատակով սթ. մարտի 31-ից ֆակուլտետի յոթ կրթական ծրագրերով դասընթացները կազմակերպվելու են առցանց եղանակով՝ միասնական Zoom հարթակում՝ առաջնորդվելով 2019-2020 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի համար հաստատված դասացուցակներով:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժնի աշխատակիցները բոլոր ակադեմիական խմբերի համար ձևավորել են անհրաժեշտ քանակի Zoom-հարթակներ: Խմբերում դասավանդող դասախոսները իրենց էլեկտրոնային հասցեներին կստանան դեպի հարթակ մուտքի լոգինը (մուտքաբառը) և գաղտնաբառը՝ դասընթացները կազմակերպելու իրավունքով: Նրանց համար մշակվել է նաև ծրագրի ներդրման և աշխատելու համառոտ ուղեցույց: Ուսանողներն իրենց էլեկտրոնային հասցեներին կստանան խմբի համար նախատեսված հղումները՝ դասընթացներին անմիջական մասնակցության իրավունքով: Նրանց անհրաժեշտ կլինի դասացուցակով նախատեսված ժամերին ակտիվացնել համապատասխան հղումը: Ուսանողների համար նույնպես մշակվել է համառոտ ուղեցույց:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Շ. Գրիգորյանը, Վ. Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հարցն ընդունել ի գիտություն, իսկ արտակարգ դրության պայմաններում Zoom համակարգով դասեր վերսկսելու վերաբերյալ կատարված աշխատանքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Նա նշեց, որ արտակարգ իրավիճակի պայմաններում 2019-2020 ուստարվա 2-րդ կիսամյակում ընթացիկ ստուգումներ և քննություններ չեն նախատեսվում: Բոլոր քննությունները կլինեն հանրագումարային և կանցկացվեն օնլայն՝ ZOOM համակարգով: Առցանց կլինեն նաև ավարտական կուրսերի հանրագումարային քննությունները:

Զեկուցողը տեղեկացրեց, որ ստուգարքերի և հանրագումարային քննությունների հարցաշարերը նախապես տրամադրվել են ուսանողներին: Քննական գործընթացի թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով քննությունների ընթացքը տեսաձայնագրվելու է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Շ. Գասպարյանը, Վ. Հարությունյանը, Ա. Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել 2019-20 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ սթ. ապրիլ և մայիս ամիսներին նախատեսվում է անցկացնել չորս կրթական ծրագրերի գծով ավարտական աշխատանքների առցանց նախապաշտպանություն: Արդեն հաստատված են նախատեսվող առցանց նախապաշտպանության օրերը՝

- Պատմություն -02.05.20 թ.
- Հայոց լեզու և գրակ. – 07.05.20թ.
- Տարր. մանկ. և մեթոդիկա – 02.05.20թ.
- Օտար լեզու և գրակ. -05.05.20 թ.

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Շ. Գասպարյանը, Վ. Հարությունյանը, Ա. Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոնների կողմից ներկայացված առցանց նախապաշտպանությունների օրերն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ սահմանված ժամկետում և սահմանված կարգով ամբիոնները ներկայացրել են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմը (Հավելված 1), որը ներկայացվել է տնօրենության հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, Շ. Գասպարյանը, Վ. Հարությունյանը, Ա. Ղազարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ամբիոնների կողմից ներկայացված ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմն ընդունել ի գիտություն:

Հավելված 1

2019-2020 ՈՒՍՏԱՐՎԱ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՐԱԿԱՎՈՐՄԱ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՑԱՆԿ

‹‹Պատմություն›› կրթական ծրագիր

1. Հայկ Իշխանի Գրիգորյան – Խ. Աբովյանի անվան ԵՊՄՀ, Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի փոխդեկան, պ.գ.թ., դոցենտ, հանձնաժողովի նախագահ
2. Դավիթ Թինոյան- ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պ.գ.թ., դոցենտ, անդամ
3. Նաթելլա Գրիգորյան- պ.գ.թ., դոցենտ, անդամ
4. Հովհաննես Ալեքսանյան- պ.գ.թ., դոցենտ, անդամ
5. Նազելի Ղալումյան- Իջևանի պատմաերկրագիտական թանգարանի տնօրեն
6. Սամվել Սիմոնյան – Խաշթառակի միջնակարգ դպրոցի տնօրեն

‹‹Հայոց լեզու և գրականություն›› կրթական ծրագիր

1. Լավրենտի Աշոտի Միրզոյան-ՀՀ պետական կառավարման ակադեմիայի լեզուների ամբիոնի բ.գ.թ., դոցենտ , հանձնաժողովի նախագահ
2. Կարինե Պողոսյան-Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ, անդամ
3. Վաչագան Ավագյան- ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ, անդամ
4. Աիդա Սարհատյան- բ.գ.թ., դոցենտ, անդամ
5. Անահիտ Ղուկասյան-Տավուշի մարզային գրադարանի տնօրեն, անդամ
6. Գայանե Էդիլյան-Իջևանի ավագ դպրոցի տնօրեն, անդամ

‹‹Տարրական մանկավարժություն և մեթոդիկա›› կրթական ծրագիր

1. Սպարտակ Սերյոժայի Սողոյան – ‹‹Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան›› հիմնադրամի ‹‹Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ›› կենտրոնի գլխավոր մասնագետ, մ.գ.դ., պրոֆեսոր, հանձնաժողովի նախագահ
2. Լիանա Հարությունյան- ամբիոնի վարիչի պաշտոնակատար, մ.գ.թ., ասիստենտ, անդամ
3. Էդուարդ Այվազյան- մ.գ.դ., պրոֆեսոր, անդամ
4. Ջուլիետա Գյուլամիրյան- մ.գ.դ., պրոֆեսոր, անդամ
5. Արմինե Ներսիսյան- «Հույսի կամուրջ» ՀԿ Իջևանի մասնաճյուղի տնօրեն, անդամ
6. Մանե Ղազումյան- ՀՀ Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի ԺՊ, անդամ

«Օտար լեզու և գրականություն» մասնագիտության

«Անգլերեն լեզու և գրականություն» և «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագրեր

1. Նելլի Էդուարդի Հարությունյան – Եվրոպական համալսարանի ‹‹Լեզվաբանություն›› ամբիոնի վարիչ, բ.գ.թ., դոցենտ, հանձնաժողովի նախագահ
2. Քրիստինե Հարությունյան- ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ, անդամ
3. Աստղիկ Չուբարյան- բ.գ.թ., պրոֆեսոր, անդամ
4. Աիդա Մարդանյան- ասիստենտ, անդամ
5. Վարսիկ Ներկարարյան- «Եվրասիա» համագործակցության հիմնադրամի հյուսիսային մասնաճյուղի ծրագրերի և գրասենյակի համակարգող, անդամ
6. Մարիամ Մարտիրոսյան- «Փրոջեքթ Հարմոնի ինթերնեյշընլ» կազմակերպության հայաստանյան գրասենյակի տնօրեն, անդամ

«Մանկավարժի լրացուցիչ որակավորում»

1. Սպարտակ Սերյոժայի Սողոյան – ‹‹Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան›› հիմնադրամի ‹‹Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ›› կենտրոնի գլխավոր մասնագետ, մ.գ.դ., պրոֆեսոր, հանձնաժողովի նախագահ
2. Ալիսա Հասանյան- Հայոց լեզվի և գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ., անդամ
3. Քրիստինե Հարությունյան- Օտար լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար, բ.գ.թ., դոցենտ, անդամ
4. Աշոտ Փաշինյան- Իջևանի Սպարտակ Սարգսյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցի տնօրեն, անդամ